ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2026 թվական թիվ 40 -Ա

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ «ՈՍԿԵՀԱՏԻ ԽՐԻՄՅԱՆ ՀԱՅՐԻԿԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԱՍԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ՏԱԹԵՎԻԿ ԱՎԱԳՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԱՐՁԱԿՈՒՐԴԻ ՉՕԳՏԱԳՈՐԾԱԾ ՄԱՍԸ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, 13-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N 1392-Ն որոշմամբ հաստատված կարգի 3-րդ հավելվածի 60-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 159-րդ հոդվածի 1-ին մասով, 160-րդ հոդվածով, 163-րդ հոդվածով և հիմք ընդունելով Տ. Ավագյանի 2026 թվականի փետրվարի 4-ի դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի «Ոսկեհատի Խրիմյան Հայրիկի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության վարչատնտեսական մասի համակարգող Տաթևիկ Ավագյանին տրամադրել ամենամյա արձակուրդի չօգտագործած մասը 2024-2025 թվականների ուսումնական տարվա համար 15 աշխատանքային օր տևողությամբ 2026 թվականի փետրվարի 5-ից փետրվարի 25-ը ներառյալ:

2.Տաթևիկ Ավագյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում «Ոսկեհատի Խրիմյան Հայրիկի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության վարչատնտեսական մասի համակարգողի պարտականությունների կատարումը ժամանակավորապես դնել «Ոսկեհատի Խրիմյան Հայրիկի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Լիլիթ Նորսոյանի վրա:

3.Տաթևիկ Ավագյանին աշխատանքի մեջ համարել 2026 թվականի փետրվարի 26-ից:

Հայաստանի Հանրապետության
Արագածոտնի մարզպետ

Recoverable Signature

X

VERIFIED OCSP 2/5/2026 10:56:47 GMT+4

Signed by: MOVSISYAN SERGEY 3309890457

Ս. Մովսիսյան

2026թ. փետրվարի 4
ք. Աշտարակ